

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՐՑԵՐ

(Պատասխան Հ. Ա. Ղազկիկեանին)

Ընթերցողները կը յիշեն որ «Սիւն»-ի 1, 2, 3 թիւերուն մէջ յօդուած մ'ունէի Հ. Արսէն Ղազկիկեանի «Գրեցէք . . . Մի Գրէք . . .» գրքին մասին. հոն պարզած էի թէ՛ ո՛չ թէ Հ. Ա. Ղ. ի հաստատածները սխալ էին (բացառելով մի քանի կէտեր), այլ թէ՛ անոր կարգ մը ժխտածները թուլատրելի են գոյութիւն ունենալու՝ առհասարակ ընդունուած ձեւերուն քովիկը: Բնական էր որ այդ առթիւ ցուցնէի անոր մի քանի ժխտումներուն անհիմն ըլլալը: Հ. Ա. Ղ. պատասխան մը գրած է «Յուսարբեր»-ի Մայիսի թիւերուն մէջ, ուր զըժ-բախտաբար քիչ մը շատ ենթակայական տարր դրած է, (գիմացիներ վերաւորելու աստիճան), բնականաբար ի միաս իրատես փաստարկութեան: Ծանօթ է որ այդ կերպը չյարմարիր նոյնիսկ ընկերային ու քաղաքական խնդիրներու շուրջ ոչ-ամբոխափարակոն բանավէճերու: Թող թէ լեզուական: Ես իր լեզուովը պիտի չպատասխանեմ իրեն, այլ իրատեսօրէն պիտի քննեմ հարցերը (որոնց վրայ նորեր ալ աւելցուցած է), պարզապէս նշելով արամարանութեան իր անարամարանական կերպերը և փաստարկութեան անփաստացի միջոցները:

1. Գործնկարիւն ձեւը դատապարտած էր ինք, առարկելով թէ անկէ ջնջուած ուն «պարզ ու չէ»: Հակառակ հարցումիս՝ Հ. Ա. Ղ. չպարզեր թէ ի՞նչ է իր «պարզ ու» ըսածը: Գործնկութիւն ձեւը ունենալու համար պէտք էր գործնեայ բառը ունեցած ըլլայինք կ'ըսէ: Բայց հայերէնը ունի նախընթացներ՝ ցուցնող թէ՛ բուն բառը մէկ ամանցումով անփոփոխ մնացած է, մինչդեռ անմիջապէս հնչափոխուած է կրկնածանցումի պարազային. — հայր՝ հայրենի՝ բայց հօրենական, մայր՝ մայրենի՝ բայց մօրենական:

Եւ հակառակ որ երկու, նոյնիսկ երեք հնչափոխումով բառեր յիշած էի, օր. թ-ն-չ-նապգի, (հակիրճութեան սիրոյն, կո-րած գրերուն տեղ զծիկներ պիտի դնեմ, իսկ փոխուած գրերն ալ պիտի ստորագծեմ), ինք կ'անհետէ այդ, և կը ջանայ

համոզել թէ բարդ-ածանց կամ կրկնածանց բառերուն մէջ առաջին հնչափոխելի տառը կը մնայ անփոփոխ, և միայն յաջորդ հնչափոխելին է որ կը փոխուի (օր. ուսումնասիրութիւն): Անտեսուէն վերջ սխալ ընդհանրացում. իր տուած օրինակը սխալ չէ, սակայն այդ մասնակի մէկ երկու օրինակներէն հանուած անսահման եզրակացումն է որ սխալ է: Ատող ինք ալ տրամաբանած կ'ըլլայ այն դողին նման որ, երբ դատաւորը կը յայտնէ թէ իր այսինչ տունը մտնելը երկու հոգի տեսած են, «Ատ ալ խօսք է, կը պատասխանէ, ես ալ տեսներկու հոգի կրնամ ցուցնել որ այդ տունը մտնելս չեն տեսած»: Իրաւ որ կրնար երկիւրին հոգի ալ ցուցնել: Հայր Արսէնն ալ կրնար 50000 բառ բերել որ իմ ըսածիս հետ կապ չունին, բայց ատող ժխտած չ'ըլլար իմ բնութեան օրինակներս որ հայ լեզուէն են. տարբեր խնդիր եթէ լեզուէն վտարել կ'ուզէ դանոնք, իր «աղանդ»երէն: Բայց հայերէնի հարուստ երեւոյթներն ու իրականութիւնները, որոնք դեռ լման խուզարուած չեն ո՛չ Բագրատունիէն ու Այսլընեանէն և ոչ ալ Հ. Ա. Ղ. էն, իրենց դոյութեան ապացոյցը վաղ թէ ոչ վերջապէս կը հակադրեն ու կը հարկադրեն զիրենք ուրացողներուն աչքին ու մտքին:

Ահա նոյն այդ հայերէնէն երեք հիմնափոխումով մի քանի օրինակներ ալ Հ. Ա. Ղ. ի վերոյիշեալ սխալ ընդհանրացումը հերքող. — վ-րաց-ազիտութիւն, Ուրթ-նապ-րկութիւն, Ուրթ-նաց-նել, մոլեղ-նՈւրթ, ծ-ն-նդենական, ս-ն-նդակ-ցիլ, արք-ուն-ական, դ-մ-նէութիւն, մեկՈւր-ացնել ևայլն, ևայլն, ԵՒԱՅԼՆ:

2. Խրատարիւն բառը թուլատրելի դատած էի իրր տեղի կարծ ու զիւրընթեռնելի և զեղահինչ: Նախընթաց օրինակ տուած էի քսութիւն և բանասարկութիւն, որոնք, կ'ըսէ Հ. Ա. Ղ., չիւնուած չեն քսու և բանասարկու-էն, այլ քսել և բանասարկել բայերուն արմատներէն: Կ'ընդունիմ. սակայն դեռ ուրիշ նախընթացներ ալ կան, որոնց անցնելէն յառաջ ընթերցողին յիշեցնեմ թէ -ուրիւն-ով կ'ածանցուին տառնաձիւն գոյութիւն ունեցող բառերը և բայերու արմատները: Արդ, քսութիւն, մտառութիւն, ձեռնարկութիւն, խնկարկութիւն,

խուզարկութիւն, խնամարկութիւն բառերը շինուած են գոյութիւն ունեցող, քրտեի, մտառել, ձեռնարկել, խնկարկել, խուզարկել, խնամարկել բայերուն արմատներէն. իսկ առաջարկութիւն, ձեռնարկութիւն և ողբերգութիւն կրնանք նաև ածանցուած համարել ուղղակի՝ առաջարկ, ձեռնարկ և ողբերգ բառերէն որ առանձին գոյութիւն ունին (ինչպէս արգարութիւն՝ արդար բառէն): Այդ օրէնքը մեկնակէտ ունենալով, կը տեսնենք թէ ո՛չ՝ նուագածել, նշանառել, վաշխառել, ձեռնածել, հագերգել, թթել, երկել բայերը ունինք, ո՛չ ալ՝ նուագած, նշանառ, վաշխառ ձեռնած, հագներգ ձեռնար պէս առանձին բառ ուրիմն ո՛րիկէ եկած են հապա՝ նուագածութիւն, նշանառութիւն, վաշխառութիւն, ձեռնածութիւն, հագներգութիւն բառերը. — տարակոյս չկայ որ՝ նուագածու, նշանառու, վաշխառու, ձեռնածու, հագներգու բառերէն որ առանձին գոյութիւն ունին: Կը նշանակէ որ երբ ասոնք —ութիւն—ով ածանցուած են՝ քովքովի եկող երկու ու—երէն մէկը ձգած են, ճիշդ ինչպէս որ ամենաարդար—էն ալ կըրկնակ այրերէն մին ինկած է, և մնացած՝ ամենարդար:

Հ. Ա. Ղ. որպէս թէ իմ տեսակէտէս հետեցնելով, կ'ըսէ թէ եթէ հովուութիւն և նման բառերէն մէկ ու—ն ձգենք, տեղը կը մնան հովութիւն, հովուհի, անպատուութիւն, անհաշուութիւն. ասոնք իսկապէս որ զաւելտական բառեր են արդիւնք Հայր Արսէնի յղացման: Ոչ թէ իմ. որովհետեւ ես շատ պարզ գրած էի Քրաց ի անպատուութիւն բառէն . . . քանի որ անպատուութիւն չենք կրնար գրել մինչդեռ խրատատու բառը ունինք, ուստի կրնանք խրատատուութիւն գրել: Խնդարիւրում:

Հայր Արսէնին ականջը չ'զգար թէ կրկնակ ու—երէն մին բաղաձայն է միւսը ձայնաւոր, անպատուութիւն բառին մէջ, և այդ բաղաձայն ու—ն ալ յառաջ եկած է բաղաձայն ու—ով իւ—էն (իւ = iv, ինչպէս որ ինք ալ գրեց բիւ = rive): Նա պէտք էր յիշէր թէ հնչափոխումը ձայնաւորնեւոր վրայ կը կատարուի, իսկ ես չառաջարկեցի բաղաձայններն ալ հնչափոխել ու ջնջել:

3. Յարդամով ձեւը ընդունելի գրածու էի օրինակներով փաստելով թէ ւծուկո բառէն շինուած չէ, թէ՛ ծածուկը, ծածքը և ծածկը իրր նախարմատ ունին ծած. (ինչպէս՝ վարուի՝ վարկ և վարք, պարհել՝ պարկ և պահք, ցանել՝ ցանք և ցանկ, ծած նախարմատէն ալ ծածկ և ծածք և ծածուկ): Կարծեմ բառին ծագման, (երանգաւորման ճամբով) պատմութիւնն ալ կը հաստատէ ծած նախարմատին գոյութիւնը: Ի՛նչ է ծածուկը եթէ ոչ բան մը որ իր քով կամ վրան ունի իր տեսնուիլը արգիլող և իրմէ աւելի քարճր բան մը որ զինք ցածը թողած՝ ծածկած է. (համեմատել նաև՝ ներքև և ներս. չէ՛ որ խիստ կլիմայ ունեցող Հայաստանի տուները գետնափոր էին, և ներս մտնելը համազօր էր ներքև իջնելու, գետինէն վար): Ծածուկ՝ ծածկ—ին հետ համեմատել նաև տամուկ = տամկ, սողուկ = ցողկ, բեղուն = բեղն:

Հասկնալի է թէ ո՛րքան անտեղի է Հ. Ա. Ղ. ի սխալ ընդհանրացումը թէ ուրեմն կարելի է գրել նաև երկայնաբաղկ, ազգօգտ, զօրագլխ, քանի որ բաղկ, օգտ, գլխ, բառ չունինք:

4. Արևոտ բառին դէմ Հ. Ա. Ղ. առարկած էր թէ «հայ լեզուի մէջ իւ—ը երբեք չի կորսուիր»: Ես ալ ութը օրինակներով (գիւտ՝ գտնել և այլն) հերքած էի այդ պատգամը: Ինք ալ կ'առարկէ թէ այդ օրինակներէն ուղիւղ և պիւղծ սխալ ձեւեր են (չըսեր թէ ինչո՛ւ), թէ՛ ցիւռկիւլ—ին արմատը ցուռկ է և ոչ թէ ցիւռկ, և թէ սփիւռ, ճիւղ, շիւղ և հիւղ բառերուն զուգընթաց ունինք նաև ճիղ, շիղ, սփիւռ և խուղ բառերը. սակայն կը խուսափի բնիկէ թէ ասոնցմէ ո՛րն է հնագոյն ձեւը: Հոլովականութեան սկզբունքէն զատելով՝ միւսնոյն բառին զիւրացած հինջը աւելի նոր է քան դժուարը. այսպէս՝ տիւար, խոռոչ, սկսանիլ, վերացուցանել աւելի հին են քան՝ տէր, խորշ, սկսիլ, վերցնել: Լեռան խորը թաղուած գայլախաղի կամ որձաքարի կտորի մը ձեւը աւելի հին է, քան հեղեղատինը որ յղկուած կ'որուած ձեւ ունի: Որով կրնանք աներկրայօրէն ըսել թէ՛ սփիւռ, գիւտ, պիւղծ, ուղիւղ, ճիւղ, շիւղ, հիւղ, ցիւռուկ հնագոյն ձեւերէն է որ վերջիվերջոյ յառաջ եկած են՝

սփռել, գտնել, պղծութիւն, ուղղել, երկ-
ճիւղ, չղարբ, խղիկ և ցուկել, իւ-ի անու-
րանալի կորուստովը կամ չգրուող ըթի
փոխուելովը:

Հ. Ա. Ղ. ըսել ուղած կ'ըլլայ թէ այդ
կորուստը անմիջապէս հին ձեւերէն չէ ե-
ղած, այլ փոխանցման միջանկեալ ձեւե-
րէն՝ սփիւռ, չիղ, խուղ և այլն: Իմ ըսածս
ալ այդ է. որով՝ պաշտօնական քերական-
ութեան ընդունած հնչափոխման կանոն-
ներէն զատ կը յանդինք նաև ուրիշ երկու
կանոններու.— 1. թէ՛ իւ-ը կրնայ փոխ-
ուիլ ինիի կամ ու-ի: 2. թէ՛ ձայնաւոր
մը կրնայ առաջին հնչափոխումէ մը վերջ
երկրորդ մ'ալ կրել. (հիւղ՝ խուղ՝ խղիկ,
զիւտ, *զուտ, գտնել, թիւրք՝ թուրք՝ թըր-
քական, քիւրդ՝ քուրդ՝ քրդերէն, չիւղ՝
չիղ՝ չղարբ և այլն):

Հ. Ա. Ղ., հակառակ անոր որ ի՛ր իսկ
առարկովի բերած օրինակներուն մէջ իւ-ը
ինիի փոխուած է, դարձեալ չի տեսներ և
չ'ուզեր տեսնել այդ իրողութիւնը, որով-
հետև Դ. Այվազովսքի հայկարանը կար-
ծած է եղեր թէ արնոտ յառաջ եկած է
միայն արմիւն ձեւէն. իր ի յայտ բերած
այդ հանգամանքը կրնայ յարմարիլ՝ ընդօ-
րինակել կամ զոց սորովիլ ուղղուներու հո-
գերանութեան, և ոչ թէ անձնապէս քըն-
նել ուղղուներու: Այդքանով ալ չի բաւական-
անար, և աչկապուկի գաւեշտը կատար-
եալ ընկելու համար կը յայտարարէ նոյն-
խօս թէ (որպէսզի Պոսիւէ ձեւին տեղ իր
խեղած Պոսուէ ձեւը կլլեցնէ ինծի) ես ալ
արդէն պաշտպանած եմ եղեր իւ ձայնին
ու-ի փոխուելը ժողովուրդին կողմէ: Նո-
րէն սխալ ընդհանրացում և անհետում:

Ո՛չ, Հայր Արսէն: Իւ բազազբեալ
ձայնաւոր մ'է, զոր եթէ տարրադպրեանք՝
կ'ունենանք ի + ու, որոնց երկուքն ալ հըն-
չափոխելի և կորուսելի են: Կարգ մը բար-
բառներ անոնցմէ առաջինը ձգելով երկ-
րորդը պահած են. Աւազը կը հնչէ աղ-
բուր, արուն, ալուր: Իսկ ուրիշներ ալ
ընդհակառակը, առաջինը պահելով երկ-
րորդը ձգած են, ինչպէս Պարբերդ և Ա-
րարկիր որ կը հնչեն արին, աղբիր, ալիր.
(այս երեոյթը անհրաժեշտաբար նկատուել է
հայերէն հին շեշտադրումը քննելու ատեն):

Հ. Ա. Ղ. կ'առարկէ, առանց ամենա-
զոյզն իրաւունքի, և ինքզինքին հակա-

սելով, թէ՛ «ո՛ր աշխարհի մէկ գրադէ-
տը ժողովուրդին ծոմոված բառերը գործ-
ածած է երբեք»: — Ամենէն առաջ ինքը,
ինչպէս որ ցոյց տուած էի, և զոր ինք
դարձեալ կ'անհետ. ինչո՞ւ կը գործածէ՝
ըլլալ որուն շիտակն է եղանիլ կամ լինիլ.
ինչո՞ւ կը գործածէ վրայ, վար, մէյ մը,
մէյ մ'ալ, առտու, ապրեցնել, եկեր է
և այլն, և այլն, ԵՒԱՅԼՆ, որոնք ժողովուր-
դէն ծոմոված բառեր են, շիտակներն
ըլլալով՝ վերայ, վայր, մէկ մի, մէկ մ'ալ,
առաւօտ, ապրեցուցանել, եկեալ է: Նոյն-
պէս՝ ինք չէ՞ որ իր գրքին մէջ կ'ըսէ.
«Պոտյոտ . . . բուն բայն է պտուտիլ, աշ-
խարհաբար պտտելը տակ է. ժողովուրդին
բերնին մէջ ուն ըթի փոխուած է, շատ
գործածական բայ մը ըլլալուն»:

Ուրիշ պարագայ.— Երևանի Ուղղա-
գրական Յանձնաժողովին իբր պատասխան
Հ. Ա. Ղ. կը ստորագրէր թէ «նախնիք զը-
րեր են Հոռվմ և Հոռմ, Յովր և Յոր, ու-
րոց մէջ ընտրութեան ազատութիւն ու-
նինք և մենք»: Իսկ իր գրքին մէջ ալ կը
գրէ. «Աշխարհաբարի մէջ այդ վեւերը բա-
կան են անպէտ դասնալ . . . ըստ իս
աւելորդ է այլևս Հոռվմ, հոռվմայեցի զը-
րել. պէտք նետել վեւր. Յովր, Յակովր,
Անտովն, Սիմովն, լեզէովն և նման սոս-
կումները առանց վեւի կ'արտասանենք»:

Պարզ է որ ինք ալ «գործածած է ժո-
ղովրդական ծոմոված բառերը»:

Ամբողջ լատինական ազգերը, անգլիա-
ցիք և այլն, հազարաւոր բառեր ունին զոր
առած են լատիներէնէ, և սոնգի մէջ լաւ մը
ճգմտեղի վերջ նուիրադործած են այսօր:
Զերկաբելու համար օրինակներ չեմ տար:

Այս բոլոր հակասումներէն ու անտե-
սումներէն կը տեսնուի թէ Հ. Ա. Ղ., ըստ
կամս, ժողովուրդի լեզուէն զբարար, և
զբարարէն ալ ժողովրդի լեզուին կը ցատ-
կէ. նա չէ բանաձեւած իր տեսակէտը թէ
ինչ է սահմանագիծը որ կը բաժնէ ժողո-
վրդի լեզուին և զբարարին՝ մեր գրակա-
նութեան մէջ մանկու իրաւունքները: Եւ
ցորչափ այդ տեսակէտը չէ կազմած՝ նա
միշտ ալ ակամայ-կամայ հակասութեանց
մէջ պիտի տարուբերի զեւ: Իսկ ես, որ
իմ տեսակէտս կազմուռ ու պարզեր եմ ար-
դէն, «աղանդաւոր» հուստաքննական բա-
ռով կը պատուովմ իր կողմէն, այն պա-
րագայէն ի վեր, երբ յանդգնեցայ իր կարգ
մը անհիմն պատգամներուն մէջ չսահմա-
նափակուիլ:

Շարունակելի

Խ. Պ. ՔԱՐՏԱՆԸ